

Հ.Հ. Արմավիր մարզի
Վանանդի գյուղապետարանի
2014թ. I կիսամյակի հաշվետվությունը
համայնքի բնակիչների 22.07.2014թ.
կայացած ընդհանուր ժողովում

Համառոտ ծանոթություն առ 01.01.204թ. դրությամբ

1. Տնտեսությունների թիվ	---	224
Բնակչության թիվ	---	1102
որից տղամարդ	---	580
կին	---	522
2. Թռչակառուներ	---	75
3. Նպաստառուներ	---	31
4. Հայրենական պատերազմի մասնակիցներ	---	1
5. Դպրոցի երեխաներ	---	123
6. Ուսուցիչներ	---	18

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքով և Արմավիրի մարզպետարանի ամենօրյա օժանդակությամբ 2014թ. տնտեսական տարին սկսեցինք ավագանու կողմից ընդունված ծրագրերի համապատասխան:

2014թ. համայնքում կայացել է մեկ ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել է գյուղապետարանի 2014թ. I կիսամյակին կատարած աշխատանքների արդյունքները:

Հաշվետու տարում կայացել է ավագանու 6 նիստ: Հիմնականում քննարկվել են 2014թ. համայնքի բյուջեի կատարման հարցերը:

Ավագանու նիստերում քննարկվել են նաև գյուղի փողոցների բարեկարգման և սոցալական այլ ոլորտի հարցեր:

Գյուղապետի կողմից ընդունվել է համայնքին առնչվող 8 որոշում, 2 կարգադրություն:

Գյուղապետարանի և ավագանու ուշադրության կենտրոնում են եղել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերը և Արմավիրի մարզպետարանի կողմից տրված հանձնարարականների կատարումը:

2014թ. I կիսամյակի ընթացքում գյուղապետարանը ստացել է տարբեր բնույթի դիմումներ, որնց տրվել է սպառիչ և օրինական ընթացք: Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել են 72 տարբեր բնույթի պաշտոնական գրություններ: Նշված գրությունները օրինական կարգով մուտքագրվել են, և ժամանակին տրվել է օրինական ընթացք: Գյուղապետարանի կողմից տարբեր կազմակերպությունների է ուղարկվել 69 գրություններ: Բնակիչների պահանջով տրվել են տարբեր բնույթի 64 տեղեկանքներ:

2013 թվականի ընթացքում ավարտեցինք համայնքի միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի հիմնանորոգումը: Դրա արդյունքում մեր երեխաները հաճախում են տաք և հարմարավետ դպրոց: 2014թ-ից սեպտեմբեր ամսից կգործի նաև համայնքի մանկապարտեզը:

Համայնքի հուզող և հրատապ հարցերից է համայնքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգումը, ինչպես նաև ակումբի կառուցումը:

Հարցի լուծման համար ավագանու որոշմամբ դիմել ենք Հայաստանի Սոցիալական Հիմնադրամին, պարտավորվելով վճարել աշխատանքների ընդհանուր արժեքի 50/0 - ի ներդրում, կապիտալ վերանորոգման համար:

Համոզված են, որ 2014 թվականի ընթացքում հիմնովին կլուծենք վերը նշված խնդիրները:

2014թ կսկսենք և կավարտենք Վանանդի գյուղապետարանի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Նշված դրական աշխատանքների կողքին, գյուղապետարանը ունի նաև թերություններ: Մեծ աշխատանք պետք է կատարվի նաև փողոցների ասֆալտապատման, կանաչապատման և ակումբի շինարարության գործում:

Իսկ այդ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է նաև որ համայնքի բնակիչները ևս կատարեն իրենց պարտականությունները: Մինչև օրս կան շատ սեփականատերեր և վարձակալներ, ովքեր չեն կատարել իրենց հարկային պարտականությունները: Ուստի օգտվելով առիթից կոչ են անում բոլոր ներկաներին, վճարել հողերի հարկերն ու վարձավճարները, որպեսզի գյուղապետարանը կարողանա ավելի շատ ծրագրեր կյանքի կոչի:

Հարգելի համագյուղացիներ Ձեզ եմ ներկայացնում համայնքի 2014թ. I կիսամյակի բյուջեի կատարման պլան-կատարողականը:

**Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 2014.
I կիսամյակի բյուջեի եկամուտների կատարման
հաշվետվություն**

N	Եկամուտի անվանումը	Պլան	կատարողակ ան	կատարմա ն օ/օ
1	Հողի հարկ	6000.0	3262.0	54.4 _{օ/օ}
2	Գույքահարկ	621.4	686.4	110 _{օ/օ}
3	Վարձավճար	250	20.8	8.3 _{օ/օ}
4	Սուբվենցիա			
5	Դոտացիա	3710.1	3710.1	100 _{օ/օ}
6	Տեղական տուրքեր	36.0	41.1	114 _{օ/օ}
7	Այլ վճարներ	710.0	418.6	60 _{օ/օ}
8	Պետական տուրք	-	14.5	100 _{օ/օ}
	Ընդամենը	11320.0	8153.5	72 _{օ/օ}



Ի հարկե այդ ցուցանիշները մարզի կտրվածքով դրական են, սակայն մեր համար գոհացուցիչ չեն, և ես հույս ունեմ որ 2013թ. տնտեսական տարում կանեք ամեն ինչ, որպեսզի այս ցուցանիշները բարձրանան և նոր սոցիալական ծրագրեր իրականացվեն:

Վանանի գլխավոր տնօրենի պաշտոնակատար



Ջ.Մանուկյան
Ա.Դալալոյան

**Արձավիրի մարզի Վանանդ Համայնքի 2014թ
I կիսամյակի
բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն**

Գ/Գ	Ծախսերի անվանումը	2014. պլան	Կատարողական	Կատարման %	Նշումներ
1	Ընդամենը վարչական բյուջե	11380.0	6352.8	56.1 %	
2	Տեղական ինքնակառավարում	7859.0	4131.5	52.6 %	
3	Աղբահանում	320.0	-		
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	7.8	-		
5	գյուղատնտեսություն	200.6	-		
6	Մշակույթ	357.1	222.1	62.2 %	
7	Ջրամատակարարում	1761.2	1555.0	88.3 %	
8	Փողոցների լուսավորություն	100.0	-		
9	Կրթություն նախադպրոցական	714.3	444.2	62.2 %	

Գ/Գ	Ծախսերի անվանումը	2014. պլան	Կատարողական	Կատարման %	Նշումներ
1	Ֆոնդային բյուջե	35519.8	980.0	2.8 %	
2	Տեղական ինքնակառավարում	22865.2	980.0	4.3 %	
3	Ջրամատակարարում	1998.3	-		
4	Պահուստային ֆոնդեր	10655.6	-		

Վանանդի գյուղապետ



(Handwritten signatures)

Զ.Սանուկյան

Լ.Աղաջանյան